


armavir@mta.gov.am
info@factor.am



Ֆակտոր Տեղեկատվական Կենտրոն
Ք.Երևան, Մաշտոցի 42, բն.
Ֆեո. + (374) 96 31101
+ (374) 77 31101
Email: info@factor.am

ՀՀ Արմավիրի մարզպետ

Աշոտ Ղահրամանյանին

Factor.am կայքի լրագրող Շողիկ Գալստյանից

Galstyanshoghik@gmail.com 0 77 311 080

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պրն. Ղահրամանյան

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. ՀՀ Արմավիրի մարզում այս պահին քանի՞ դպրոց կա, որտեղ շինարարական աշխատանքներ են ընթանում: Խնդրում եմ տրամադրել այդ դպրոցների ցանկը և նշել, թե որ դպրոցը որ համայնքում է գործում: Բացի այդ, առանձին-առանձին տրամադրել ցանկ, թե որ դպրոցներում են մասնակի շինարարական աշխատանքներ ընթանում, որոնցում ամբողջական:
2. Խնդրում եմ առանձին-առանձին նաև ներկայացնել, որ դպրոցում որ ընկերությունն է շինարարական աշխատանքներ իրականացնում:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
12300-97
07 09 2017

3. Խնդրում եմ մանրամասներ հայտնել նաև ընթացող շինարարական աշխատանքներից: Ի՞նչ փուլում են, ե՞րբ կավարտվեն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան օրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն, պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, ոտի՛ն կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

07.09.2017

Կանխավ շնորհակալ եմ՝
Շողիկ Գալստյան

